

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽԱԴԱՐՁ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՔՍՍՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԱՔՍՍՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍՍՅԻՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեն և Բելառուսի Հանրապետության մաքսային պետական կոմիտեն (այսուհետ՝ Կողմեր),

դեկավարվելով 1994 թվականի ապրիլի 15-ի՝ Մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին Համաձայնագրով ու 2000 թվականի հոկտեմբերի 31-ի՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության և Բելառուսի Հանրապետության մաքսային պետական կոմիտեի միջև փոխօգնություն ցուցաբերելու կարգի մասին Արձանագրությամբ,

ընդունելով ապրանքների ներմուծման և արտահանման ժամանակ մաքսատուրքերի, գանձումների, հարկերի և այլ վճարումների ճիշտ գանձման, ինչպես նաև նշանակման երկիր ապրանքների տեղափոխման և առաքման, հայտարարագրված մաքսային արժեքի, ծագման երկրի վերաբերյալ տեղեկությունների, ինչպես նաև ապրանքների իրենց անվանմամբ հայտարարագրման նկատմամբ հսկողությանը վերաբերող՝ Կողմերի պետությունների նորմատիվ ակտերի դրույթների հստակ պահպանման կարևորությունը,

գիտակցելով, որ փոխադարձ առևտրի մաքսային վիճակագրության տվյալների պարբերական փոխանակումը, այդ տվյալների համադրումը և դրանցում անհամապատասխանությունների պատճառների բացահայտումը ոչ միայն կնպաստեն Կողմերի պետությունների փոխադարձ առևտրի մաքսային վիճակագրության ճշգրտության բարձրացմանը, այլ նաև դրական ազդեցություն կունենան Կողմերի պետությունների մաքսային օրենսդրությունների խախտումների կանխարգելման, բացահայտման և կանխման արդյունավետության վրա,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին՝

Հոդված 1

1994 թվականի ապրիլի 15-ի՝ Մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին Համաձայնագրի իրականացման նպատակով Կողմերը եռամսյակը մեկ անգամ, ինչպես նաև տարվա արդյունքների կտրվածքով, փոխանակվում են Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության փոխադարձ առևտրի մաքսային վիճակագրության տվյալներով (այսուհետ՝ մաքսային վիճակագրություն):

Հոդված 2

Սույն Արձանագրության 1-ին Հոդվածին համապատասխան տրամադրված տվյալների հիման վրա յուրաքանչյուր Կողմ անցկացնում է համեմատական վերլուծություն և դրա արդյունքում սահմանում այն ապրանքային դիրքերը, որոնցում կան մաքսային վիճակագրության տվյալների անհամապատասխանություններ և որոնց շուրջ անհրաժեշտ է իրականացնել ավելի մանրամասն վերլուծություն՝ այդպիսի անհամապատասխանությունների պատճառները բացահայտելու նպատակով:

Հոդված 3

Կողմերը գրավոր ձևով փոխանակում են համեմատական վերլուծության արդյունքները և առանձին նշում այն ապրանքային դիրքերը, որոնց վերաբերյալ պահանջվում է մանրամասն տեղեկատվություն՝ մաքսային վիճակագրության մեջ այդ անհամապատասխանությունների պատճառների բացահայտման նպատակով: Այդպիսի տեղեկատվությունը (այսուհետ՝ տեղեկատվություն) ձևավորվում է Կողմերի կողմից սույն Արձանագրության անբաժանելի մասը հանդիսացող 1-ին և 2-րդ Հավելվածների համապատասխան և փոխանցվում մյուս Կողմին՝ Կողմերի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից յուրաքանչյուր դեպքում համաձայնեցված ընդունելի ձևով:

Անհրաժեշտության դեպքում հարցման հիման վրա կարող է տրամադրվել լրացուցիչ տեղեկատվություն:

Հոդված 4

Կողմերը պարտավորվում են սույն Արձանագրության 3-րդ հոդվածին համապատասխան ստացված տեղեկատվությունն օգտագործել բացառապես մաքսային նպատակներով: Այն կարող է փոխանցվել կամ օգտագործվել ցանկացած այլ նպատակներով միայն այդ տեղեկատվությունը տրամադրած Կողմի գրավոր համաձայնությամբ:

Յուրաքանչյուր Կողմ ստացած տեղեկատվության համար ապահովում է գաղտնիության այնպիսի ռեժիմ, ինչպիսին իր պետության ազգային օրենսդրությամբ սահմանված է նմանատիպ բնույթի և բովանդակության սեփական տեղեկատվության համար:

Հոդված 5

Կողմերի ներկայացուցիչները սույն Արձանագրության դրույթների իրագործմանը վերաբերող հարցերի քննարկման նպատակով կհանդիպեն ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

Կողմերը լիազորում են իրենց պաշտոնատար անձանց սույն Արձանագրության դրույթների իրականացման համար հաստատել և պահպանել անմիջական կապեր և սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո 30 օրվա ընթացքում փոխանակում են այդպիսի անձանց ցանկերը:

Հոդված 6

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Արձանագրությունում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն դրա անբաժանելի մաս հանդիսացող առանձին արձանագրություններով, որոնք ուժի մեջ կմտնեն սույն Արձանագրության 7-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Սույն Արձանագրության Հավելվածները համարվում են դրա անբաժանելի մասեր:

Հոդված 7

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի կատարելու մասին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցումը ստանալու օրվանից:

Սույն Արձանագրությունը կնքվում է 1994 թվականի ապրիլի 15-ի՝ Մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին Համաձայնագրի գործողության ժամանակահատվածով:

Յուրաքանչյուր Կողմ կարող է դադարեցնել սույն Արձանագրության գործողությունը՝ իր մտադրության մասին մյուս Կողմին ուղարկելով գրավոր ծանուցում: Այդ դեպքում Արձանագրության գործողությունը դադարեցվում է այդպիսի ծանուցում ստանալու օրվանից 6 (վեց) ամիս հետո:

Կատարված է Երևան քաղաքում, 2006 թվականի հոկտեմբերի 23-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն. ընդ որում, բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Արձանագրության դրույթների կիրառման կամ մեկնաբանման ընթացքում տարաձայնություններ առաջանալու դեպքում, նախապատվությունը տրվում է ռուսերեն տեքստին:

Հավելված 1

ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

Հավելված 2

ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Արձանագրությունն ուժի մեջ է մտել 2007 թ. մայիսի 7-ից